

ՊՈՒԼԿԱՐԻԱ

ՊԱԹՄԱՆՆԵՐ

Տարեկան 8 Ֆր.
Վեցամսեայ 4 Ֆր.

ԱՐՏԱՍԱՀԱՄԱՆ

Տարեկան 10 Ֆր.
Վեցամսեայ 5 Ֆր.


ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2. Տօլ.
Վեցամսեայ 1. Տօլ.

ԿԱՆԻՍԻԿ

ԽԱՆՈՒՑՄԱՆ ՏՈՂԸ

20 ՄԵՐ.



ԱՂԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԷՆ ՇԱՐԱԹ ՕՐԵՐ

rev. Père G. Kalemkérion Michitaris
tengasce № 4
Vienne

Réaction du Journal

«Travounk»

Varna

Редакция На

Вѣстникъ

«Нравуникъ»

Варна

Գրութիւնք եւ չեմ
տրոշիր

«ՀԱՅԱԿԵԱՆ ՊՐՕՊԱԿԱՆԴԻՍ-ՆԵՐԻ ԴՊՐՈՑԸ»

Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան գաւառական մէկ նոր օղկանը կը ըսէ. «Եւ ահա մէկ ամիս, Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան Տաճկաստանի մասնաճիւղերի ներկայացուցիչ պատգամաւորները կը հաւաքուին Կ. Պոլսում և առաջին անգամ լինելով կը կազմեն մեր իրականութեան մէջ, քաղաքական կուսակցութեան աղաքահաճութեամբ»:

Այս առթիւ նոյն օրկանը կառավարիչ «Հէնց այս աշնանից բացել հնչակեան պրօպագանդիստներին դպրոցը, Դպրոցը պիտի լինի Կ. Պոլսում. զեկամարը՝ Ընկեր Ս. Սալահ-Դիւլեան, իւրաքանչիւր մասնաճիւղ առանձին առանձին, համաձայն իր թւական և նիւթական կարողութեան պիտի ուղարկէ 1-3 երիտասարդ ընկերներ, և հոգալու է հաղիւ Յ ամիս տեղը ընթացքի ծախսերը»:

Սօսիալիստական գաղափարը հայ ժողովրդեան մէջ տարածելու նպատակ միայն ունեցող գործունէութեան մը այս նոր առաջարկը ինձ մտածել կուտայ թէ, եթէ ամբողջ հայ ազգը թուրքիոյ մէջ ընկերվարական գաղափարը կատարելապէս կլէ ու մարտէ, անով կարող պիտի ըլլայ մեր աղաքակիրցներու անտեսական և քաղաքացիական լաւագոյն կեանք մը ապահովել մեր Բիւրտ, Թիւրք և Աքերքէզ դրացիներուն մէջ, որոնք ոչ սօսիալիզմ կը ճանչնան, ոչ հասարակութեան սկզբունքին վրայ գաղափար ունին և ոչ ալ Հայուն աշխարհի վրայ ազատ չըն չելու տարրական իրաւունքը յարգել կը սիրեն:

Թուրքիոյ ալլաղան տարրերու, մանաւանդ մահմետականներու որոնք մէջ կապրի հայ ժողովուրդը, հաւասարութեան սկզբունքը բռնելու անընդունակ ներկայ վիճակը ինչ բաւաւրում կրնայ կրել մեր սօսիալիստ ըլլալէն, Ենթադրենք թէ հայ գործադուները և մշակները ընկերվարական ուղի-

էն ընթանալով, իրենց հայ վարպետներու և գործարանատէրերու դէմ օրավարձի և աշխատութեան ժամերու մասին պայքար մղելով, իրենց նպատակով պայմաններ ընդունել տան, ինչ կը ըլլայ ասոր հետեանքը, երբ մահմետական գործաւորը ու մշակը իրենց կրօնակից վարպետներուն և գործարանատէրերուն հանպէպ ոչխարային համակերպութեամբ վարուել կը շարունակեն:

Գործնական կեանքը մեզ կը պատասխանէ թէ անոր հետեանքը կը ըլլայ թէ՛ հայ վարպետին և գործարանատէրին սնանկացումը և թէ՛ հայ գործաւորին անգործ և հացազուրկ մնալը:

Մենք մի քիչ պիտի կրնայինք համոզուիլ, եթէ մեր դրացի մահմետական ցեղերն ալ նոյնպէս ալ Հրեաները և Յոյները, մերիններուն չափ պատրաստուած ըլլային ընկերվարական սկզբունքներ մարտելու կամ ընկերվարական բարեկամութեամբ օսմանեան բոլոր ցեղերուն մէջ հաւասար տարածուէր:

Աստի խորհուրդ պիտի տայինք մեր սօսիալիստ կուսակցութիւններուն որ այլևս, ժամանակ մը գոնէ, բաւ համարէին հայ ժողովուրդի մէջ իրենց լեզուազարութիւնը, և իրենց ճիգը թափէին մասնաւորապէս իսլամ ցեղերու մէջ սօսիալիստ քարոզչիներ պատրաստելու և զանոնք վարձեցնելու հաւասարութեան և եղբայրութեան գեղեցիկ սկզբունքներուն, Միմիայն այդ կերպով է որ հայ սօսիալիստները իսկական ծառայութիւն մատուցած պիտի ըլլան ընդհանրապէս օսմանեան ցեղերուն և մասնաւորապէս հայ ժողովուրդին:

Արդ, մենք մեր կողմէ կառավարիչներ որ փոխանակ «Հնչակեան պրօպագանդիստների դպրոց» հաստատելու, մեր սօսիալիստ կուսակցութիւնները շանահաստառել Օսմանեան բարեկամութեան գործը թուրք լեզուով, կրնան:

Յ. Գուրպիր

ԱՂԳԱՅԻՆ

Ամենայն Հայոց Վեհ. Կաթողիկոսը Տփղիս գացած ըլլալով, կովկասի փոխարքային հետ տեսակցելու համար Մցխէթ գնաց մասնաւոր կառավարելով, զոր Անոր տրամադրած էր փոխարքան, Մցխէթի կայսրանէն ալ օթօմպիլով առաջնորդուեցաւ փոխարքայի բնակարանը յունիս 29ին, կոմսը և կոմսուհին իրամբողջ ընտանիքով ուղարկուեցաւ, գուրանքով ընդունեցին Վեհ. Հայրապետը:

Փոխարքան հրաւիրելով իր առանձնասենեակը երկարատեւ խօսակցութիւն մը ունեցաւ Վեհ. Կաթողիկոսին հետ. թարգման էր Տէր Մեսրոպ Եպիս, Տէր-Մովսիսեանը:

Այնուհետեւ Ս. Հայրապետը իր շքախմբով նախաճաշի հրաւիրուեցաւ, ուր փոխարքայի կինը, կամուսնի էլիսաւէտը իբրեւ տանտիրին սերալիւր հիւրասիրութիւն ցոյց տուաւ:

Վեհ. Կաթողիկոսը այցելեց նաեւ Մցխէթի Վեհ. հինաւորաց տաճարը և Հայոց եկեղեցին, նոյն օրը իրիկուան դէմ վերադարձաւ Տփղիս:

Շուրջայի Եկեղեցւոյ վերանորոգութեան համար հանգանակութիւն կատարող Տէր Յովհանն Եպիս, Մանգակունի հակառակ ուսանց կողմէ արգելքներու ու դժուարութեանց բաղկացում, շնորհաւորելի յայնուրթիւն մը ունեցած է Եւրոպայի հայ գաղութներուն մէջ: Մարտիլիայէն մինչև Մանչեսթր կատարած հանգանակութեան արդիւնքը հասած է 6,800 ֆր. ի, որուն 2,800 ը Անգլիոյ մէջէն:

Հ. Բ. Ը. Միութեան նոր մասնաճիւղեր հիմնուած են Վիեննայի և Պէրուի մէջ:

Վանի Մասնաճիւղը կեդրոն ժողովին ղրկած է 60 ոսկի. Սեբաստիոյ Մասնաճիւղը ղրկած է 15 ոսկի:

Նոյն Միութիւնը 30 ոսկի ղրկեց Մուշի Ս. Առաքելոց վանքի որբանոցին, նոյնպէս 30 աղքատներու:

Սկի ղրկեց Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսին, Արֆալու գիւղին 500 տէսնիւմ հողերուն փոխարժէքը լրացնելու համար:

Երուսաղէմայ մէջ ալ Հ. Բ. Ը. Միութեան Մասնաճիւղ մը կազմուած է նախաձեռնութեամբ Կեսարիոյ նախորդ առաջնորդ Տէր Տրդատ Եպ. Պալեանի:

Չօք-Մարզուանի ազգայինները սիրալիր ընդունելութիւն մ'ըրած են Հ. Միութեան պատուիրակ Տ. Կ. Շէրիտեան պէյի և Տ. Յ. Օհանեանի և իրենց երախտապարտ զգացումներուն իբր դրական ազգայն մասնաճիւղ մը հիմնած են. առաջին բաժանորդագրութեան արդիւնքը եղած է 50 ոսկի մուտք և 5 ոսկի ամսաբաժին, և տեղւոյն երեւելիներէն Տ. Բէլթէկեան 20 արտավար հող նուիրած է Միութեան:

Մուշի շրջականները Բիւրտերու կողմէ Հայու մըն ալ սպաննուելու տխուր լուրը հեռագրած է Ս. Առաջնորդը: Ազատութեան հռչակուելէն ի վեր Տարօնի մէջ գործուած ոճիրները անպատիժ կը մնան ի քաջալերութիւն Բիւրտերու:

Ս. Պատրիարքին և Թաղ. Խորհրդոյ հրաւերով անցեալ կիրակի Ղալաթիոյ եկեղեցին մէջ հանդերձեալ էր պատարագել նախկին պատրիարք Օրմանեան, կարգ մը դաշնակցական տղաք տգեղ ցոյց մը կազմակերպելով, արգելք եղած են Օրմանեանի պատարագելուն և նոյն իսկ փորձած են անոր վրայ յարձակում գործել մեկնած պահուն: Ազգային և կրօնական իշխանութեան հրաւերին ու կարգադրութեանը դէմ գործուած այդ հրապարակային խայտառակութիւնը նոր ազգայն մըն է թէ Դաշնակցականք որոշած են ամէն գնով բեկանել Ազգ. Պատրիարքարանի և Կաթողիկոսի ազդեցութիւնը ու հեղինակութիւնը: Պոլսոյ հայութիւնը մինչև երբ պիտի հանդուրժէ այդ լրբութիւններուն և անզուսպ պիտի ձգէ կարգ մը ոչ խարամիտներու անպատկառ թելադիրները, որոնք Ազատամարտեան խթանը կը կազմեն գլխաւորապէս և որոնք այդ օրը պոռացած են Վիեննա ազգ. իշխանութիւն չենք ճանչնար:

Տուտակ ստանալու համար պի-
մեցելք Տ. ԵՆՆԻԿ ԳՊՐԱԳՆՃԻ ԼՆԻ
գրասենեակը որ կը գտնուի նա-
ւահանգիստ և կախարան տոպփ-
նորդող պողոտային վրայ, Կիս-
վագո մեծ ծառին գիմարցը:

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

Մեր նախնիների թիւով «Երեք Վառ-նացիներ» ստորագրութեամբ բաց նա-մակ մը տարեկան 2500 ֆր. ի խնայու-ղութեան միջոցներ ցոյց կուտար Պատ-թաղական Խորհուրդին: Անցեալ շաբ-թու ալ նոյն Երեք Վառնացիները ու-րիշ նամակաւ մը կառավարիչին նոյն Խորհուրդին՝ նուազուրդի դնել վարժա-րանին համար շինութիւնք առարկաները: Բայց այս վերջին նամակը մեզ հասած օրը տեսանք թէ թաղ, Խորհուրդը ծա-նուցումներ ցրուած է Ազգ. Վարժա-րանին համար շինութիւնք գրասենյակ-ներու գործը նուազուրդի գրութիւն ծա-նուցանող: Մեր մէջ այս նոր երեւոյթը ուրախութեամբ դիտեցինք և այլևս հարկ չը տեսանք յիշեալ վերջին նա-մակը հրատարակել, քանի որ անոր օգ-տակար նպատակը արդէն իրական-նանայ կը սկսէր:

Այս կիրակի օր տեղի ունեցաւ գրա-սենյակներու շինութեան նուազուրդը: Բաւական թիւով հայ ատաղձագործ-ներ և կողմնակի մարդիկ ներկայ գտ-նուած են որոշեալ ժամուն: Մեր ա-ռած սեղաններու համաձայն, ու-շագրաւ երեւոյթ մը տեղի ունեցած է հոն. ծանօթ հայ արհեստագործներ երբ իւրաքանչիւր գրասենյակին համար 3 ֆր. 34-80 և 34-60 ֆր. ըսելով խիստ փոքր գնդերով կը մրցին, գրսէն մէկը յանկարծ 25 ֆր. ի կիշեցնէ: Ասոր վը-րայ, այն ծանօթ արհեստագործները պահ մը ապշած մնալէ յետոյ, իրենք ալ կը ստիպուին 24, 23 և այլն ըսել, բայց գրսէն եղող այն յանդուգն անձնա-ւորութիւնը կը շարունակէ իր գնդը և 22-80 ի իր վրայ կը մնայ: Այս անձը նոյն իսկ փաստելով չինել տալ յանձնառու ըլլալով հանդերձ, կառա-ջարկէ որ 24 ժամ ևս պայմանաժամ տրուի 5 աւ 100 գնդչորին յանձնելու պայմանաւ: Հետեւեալ օրը ուրիշ կարգ մը հայ արհեստագործներ ալ կը փու-թան մասնակցել և գինը կիշնայ 21 ֆր. ի, որ կը մնայ առաջին անգամ 33 ֆր. ի կրնամ չինել ըսող արհեստա-ւորին վրայ:

Այժմ ընթերցողը կրնայ բաղադրու-թեան դնել 33 և 21 թիւերը. որոնք ցոյց կուտան 50 գրասենյակին համար՝ 14 ակն ֆրանքէն 700 ֆր. ի պատկա-ռելի չափ մը Ազգ. Մատուցում:

Ուստի այլևս աւելորդ է կարգ մը բացատրութիւններու մտնել թէ որչափ օգտակար է Ազգ. կառուածներու վարձ-քերաճութիւնը աճութիւն և շինութիւն-ները նրուազուրդի դնելու դրութիւնը:

Պատ. Թաղ. Խորհուրդը այս գրա-սենյակներուն առթիւ սկզբամբ ընդու-նած ըլլալով այդ դրութիւնը և ակն-յայտի կերպով անսած ըլլալով անոր անբաղադատելի օգտակարութիւնը, կը սպասենք որ ասկէ յետոյ շարունակէ հետեւիլ նոյն դրութեան: Արդէն նոյնը կընեն թէ, պետական մարմինները և թէ տարբեր հասարակութիւնները

ՀԱՅԻՆՆԻՔԻ ՎԻՃԱԿԸ

Վան, 16 յունիսի

Մարդասպանութիւններն ու ալան-թալանները նորից վերսկսուել են: Գի-տէք, որ անցեալ աշնան մը շարք քիւրդ ցեղապետներ, աւաղակներ, յայ-տնի ոճրագործներ հաւաքվեցին Ատր-պատականում Մակուի սարգարի մօտ, ուր Խորհուրդներ էին սարքում գա-րնան յարձակումներ գործելու սահմա-նադրից այս կողմը և թիւրքական հողը գարնանու աւելի ու արեան թա-տերաբն: Այդ նպատակով քիւրդա-

կան միութիւններ ստեղծվեցին սահմա-նից այն կողմն ու այս կողմը. բայց երեւում է, որ այս Խորհուրդը չա-քաջալեր չը ստացաւ: Քիւրդ հասա-րակ, աշխատաւոր Ժողովուրդը չը հա-մողվեց թողնելու խալաղ, նորմալ կեանքն ու բաղդախնդրութիւնների ետեւից ընկնելու. ուստի Բեօր-Հիւսէին փաշան մի քանի ընկերներով վերա-դարձաւ Թուրքիա, իսկ Էլէն փաշան դեռ շարունակում է մնալ Իրանում:

Այդ ժամանակից Պարսկաստանում էին ապստանել նաև յայտնի քիւրդ հրոսակապետներ, ինչպէս են կրավցի գիւղից Միր-Մէ և նրա հօրեղոր որ-դիներ Կաղըր ու Ջէֆէր, որոնք անց-եալ տարի Կանգլաւ գիւղում եօթն հայեր սպանելու պատճառով՝ փախը-տական էին եղել: Սրանք անա այժմ վերադարձել են Պարսկաստանից 100է աւելի հեծեալ ընկերներով և աւերի ու թալանի են մատնում Ուշաք, Նօր-դուզ, Շատախ, Հայոց-Ձոր և այլ գա-ւառները: ասում են, որ սարգարն էլ մարդիկ է տուել սրանց:

Յիշեալ Միր-Մէն անցեալ շաբթում մի վաճառաւորի կարաւան կողպեց Ուշաքի գաւառում, լախտակելով նրա հետ եղած վաճառքներ և անասունե-ր. քանի որ առաջ էլ նրա ընկերները-Կա-ղըր ու Ջէֆէր-Նօրդուզի ճանապարհը կարելով, նոյն օր պատահած բոլոր հայ ու քիւրդ ճամբորդներին, թւով 40-ից աւելի, բռնեցին և իրանց հետ գերի տարան լեռներում: Կառավարութիւնը լիմանալով զօրքեր ուղարկեց գերիներ-րին ազատելու համար. զօրքերը կու-սկանցին քիւրդերի հետ: մի ամբողջ օր գնդակներ արձակվեցին երկու կողմից, առանց ոչ մէկ հետեւանք ունենալու. իսկ յաջորդ օրը քիւրդերն արձակեցին բոլոր գերիներին էլ, սպանելուց յե-տոյ նրանցից մէկին: Փորբէդէյան գիւ-ղացի Սահակ Դարբեանին, որի դէմ վրէժ ունէին, իսկ կողոպտեցին նրան, հետ եղած 15 ձիեր, ապրանք և 100 ոսկուց աւելի էլ դրամ, չը խտրելով հայի ու քիւրդի: Նրանք գալիս էին Վանի ցորեն և այլ վաճառքներ գը-նելու:

Այսպէս ուրիշն Միր-Մէ, Կաղըր ու Ջէֆէր նոր եռապետութիւն կազմած ահ ու սարսափի են մատնել երկիրը Նօրդուզի և Ուշաքի, Շատախի Հէ-քարի ճամբաները փակվել են, երթ-ևեկութիւնները դադարել, իսկ կառա-վարութիւնը անտարբեր հանդիսատես է լինում, կարծես թէ ոչ մի բան չէ պատահել: իսկ վալիս պոտյոյի է ելել գաւառներում:

Երկու օր առաջ Կաւաշ գաւառակի ծաղուն գիւղում երկու եղբայրներ՝ Մանաս և Անդրանիկ՝ իրանց մարգա-դետից քիւրդերի տաւարները դուրս հանելիս, քիւրդերը սպանեցին նոյն երկու եղբայրներին, մի հայի տուն էլ աւերումը մատնելով: Մարդասպան-ները նոյն գաւառի Շատական գիւղիցն են, որ դրացի է ծագուն գիւղին: Ա-սում են, որ վերջին օրերում քիւրդ-պրօպագանդիստներ չըլում են գիւ-ղերում քիւրդական միութիւններ են կազմում և զրգուում են քիւրդերին հայերի դէմ: այս սպանութիւնն էլ վե-րագրվում է այդ գրգռութիւններին: Կասկածվում է, որ սրա պատճառով ազգայնական ու ֆանատիկ զգացում-ներն աւելի լարվեն, տեղի տալով նոր ոպանութիւնների և նոր ալան թալան-ներին:

Հայ մէկ կնոջ կրօնափոխութեան հետեւեալ պարագան բաւական հետա-քրքրական է: Սրանից երեք տարի առաջ Աղբակ գաւառի էրնիկան գիւ-ղացի Ոսկո անուն մի աղջիկ առեւանդ-վում է նոյն գաւառի Աշակերտ գիւ-

ղացի մի թիւրքացած հայի ձեռքով. մի քանի օրից յետոյ այդ աղջիկը ներ-կայանում է Բաշ-Կալէի իդարէի մէջ-լիսին և, հաւատարմութիւն յայտա-բարելով, առեւանգող քիւրդացած հա-յին կին է լինում: Իսկ մէկ ամիս ա-ռաջ նոյն Ոսկոն ամուսնու տնից փախ-չելով Ս. Բարդուղիմէոսի վանքն է ապաստանում և հեռագիր տալով Վա-նի առաջնորդարանին յայտնում է, որ ինքը հայ է և հայ պիտի մնայ, թէ Բաշ-Կալէի իդարէի մէջ իսկ առաջ կրօ-նափոխութեան յայտարարութիւն տու-ողն ինքը չէ եղել, այլ իր թիւրք տա-գեր կինն է արել նոյն յայտարարու-թիւնը իր անունից: Բաշ-Կալէի կա-ռավարութիւնը ուղարկում է նոյն կը-նոջը քաղաքս. բայց հակառակ ա-ռաջնորդ. փոխանորդի պնդումներին, վալին նրան կրկին չէ խօսեցնում և բանտարկում է, ասելով ինքը կնոջը համարում է իսլամ, և իսլամը չէրի օրէնքով չէ կարող փոխել իր կրօնը թէկուզ սուլթանն ինքն էլ հրամայած լինի, իսկ կնոջ ներկայ յայտարարու-թիւնը համարում է կեղծիք:

Դժբաղդաբար վալին, որի լուսա-միտ լինելուն վստահ էինք, որ ուսա-նել է Սօրօնի համալսարանում և եր-կար ժամանակ մնացել է Եւրօպայում, սրանով իր ֆանատիկ մի թիւրք լինե-լու փաստն է տալիս: Այժմ աղջկան կրկին վերադարձել են Աղբակ, իսկ հետեւանքի մասին դեռ չենք իմացել. գուցէ բռնաբար նորից քիւրդ ամուսնու-ձեռքը մատնեն:

Մարակ

Մեակ

ԱՐՄԵՆԱՆ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՄ

„Հ Ի Ի Բ Ե“

Անցեալ հինգշաբթի «Բրօշէք» սրահին մէջ Ամենեան թատե-րախմբին կույմէ ներկայացուե-ցաւ «Հիւրը» թատերասէրներու սակաւաթիւ ներկայացութիւնը աթոռներու հանդիսաւոր պարա-պութիւնը՝ յստակօրէն ցոյց կու-տար թէ խումբը Վառնա գալուն չէ գիտցած ինքզինք լաւ չըլա-նակի մը մէջ զետեղել:

Տանիմարգացի մեծ ընկերաբան էտուարտ Պրանտէսի սոյն թա-տերախմբը թէ և չը պարունակեր իր մէջ մեծաշուք ցայտուն ցրուագներ՝ ասպետական ապշե-ցուցիչ խռովքներ, սակայն ինչ հօյտկապ ինչ հոգեթով վեհա-պանծութիւն մը կը բարձրանայ իր խոնարհ և անզարդ տարազին մէջէն:

Ահա Աիքք

Ներկօր անունով երիտասարդ կա-ռածատէր մը ամուսնացած էր Յիւ-րիգէլ անուն գեղանի աղջկան մը հետ: Ներկօր կը սիրէր իր կինը անոր ան-թիւ բարեմասնութիւնները, անոր ամուր պարկեշտութիւնը իրանութիւն և ժը-պիտ կը սիրէր իր կեանքին վրայ:

Սակայն միթիւ վարագործ մը կը ծա-կէր իր աչքերուն առջև ահաւոր անց-եալը իր կնոջ՝ զոր կը պաշտէր անու-նօրէն:

Յիւրիգէլ հազիւ տասնեակեց տարեկան դեռափթիթ անփորձ աղջիկ. իր մէկ անմիտ ճամբորդութեան մէջ կը հան-դիպի Բէպկօլտ անուն անծանօթ երի-տասարդի մը: Աղջիկը անոր կեղծ խոս-տովներէն, նկնք արուեստագ աներէն

մոլորուած՝ անոր կը յանձնէ իր սիրտն ու մարմինը: Բէպկօլտ կը լքէ զայն վատօրէն. Իսկ Ներկօր օր մը հանդի-պելով Յիւրիգէլի կը սիրէ զայն և կամուսնանայ անոր հետ ուրիշ դաւակ մըն ալ ունենալով կ'օրհնէ իր կեանքն և երջանկութիւնը:

Սակայն գաղտնիքը որքան լուռ, նոյնքան անգութ և նախանձոտ: Յան-կարծառաւ մորիկ մը կը բղթաէ իր քօ-ղը: Բէպկօլտ իր մէկ ճամբորդութեան մէջ՝ անգիտակ՝ կ'իջեանէ Հերկօրի տու-նը: Յիւրիգէլ Բէպկօլտ կը տեսնեն դիրար. երկուքը չփոխութիւնը կը պա-տէ դիրենք: Սրիկայ Բէպկօլտ՝ Յիւ-րիգէլի անցեալով գլխուած՝ կը պա-հանչէ կրկին վայելումն այն ամու-նային հովուերգական գիշերուան: Յիւրիգէլ կընդմանայ որոտայտելով անոր հանդէպ իր ունեցած զգուանքն և անսահման ատելութիւնը:

Ներկօր վերապէս կը տեղեկանայ գաղտնիքին կուզէ դաշոյնաբար ընել իր բարեկամը որ խորտակած էր իր ամբողջ կեանքն և երջանկութիւնը. բայց անբաւ գտնելով իր վճիռը սու-նէն դուրս կը վռնէ գայն: Նոյնը վու-զէ ընել Յիւրիգէլի սակայն անոր ան-մեղ արձուցնելու հանդէպ խղճա-հարուած կը հաւանի դարձեալ ապրիլ մէկտեղ տխուր, սգաւոր:

Երեք տարի առաջ Գահրէի մէջ տեսածէս աւելի յաջող գտայ Պր. Արմէնեանը Ներկօրի դե-րին մէջ, խաղին շարժումներն են հետ համաձայն կընթանային իր ձայնը և ժեսթերը, Գալով պր. Անդրանիկի երբէք յարմար չը գտայ զինքը Բէպկօլտի դերին մէջ. իրեն ուրիշ դերերու մէջ ունեցաւ յաջողութեան մասին գրած եմ: Անշուշտ ակամայ ըս-տանձնած էր, ուրիշ մը չգտուե-լուն:

Տիկ. Արմէնեան Յիւրիգէլի դե-րին մէջ անթերի էր իր փոփ-կաշնորհ շարժումներով, դիմա-խաղութիւններով. սակայն ձայ-նին գահազէժ միօրինակութիւնը խաթարեց իր ունեցած բովան-դակ յաջողութիւնը: Ձայնին փո-փոխական ներդաշնակութիւնն է որ պիտի հմայի ընտեսաբանա կանամբողջ երանգները: Առանց անոր դերակատար մը այնպիսի կը համարուի, ինչպէս ծաղիկ մը ա-ռանց բոյրի:

Սեք Գալեմէան

ԾԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

«Ի ր աւ ու ն. ք» ի խմբագրա-տունէն կարելի է ստանալ

Հետեւեալ գիրքերը:

- ՀԱՐԻՊ ԱՌՊԵՐ՝ գին 1. ֆր
- ԱԶԱՏ ԵՐԳԱՐԱՆ » 1. »
- ԹԻԱՊԱՐՏ Ա. հատոր » 1.20 »
- ԹԻԱՊԱՐՏ Բ. » 2.80 »
- ԿԱՐՄԻՐ ԺԱՄՈՒՅ » 1. »
- ԻՐԱՆԻՆԻՔԻ հաւաքածոյ մէկ տարուանը 12 ֆր.



